

ցոյց է տալիս մարդկանց կեանքի զոյու-
թեան համար մղած պայքարը: «Այ կար-
միր վարդ» գարնան և բլրուլի շուրջ հիւս-
ւած յոռետես մի բանաստեղծութիւն է:
«Խնկրում եմ թեզին» երգով՝ երգիչն իր
բարեկամին տուն է հրաւիրում, որպէս զի
միասին ուրախ ժամանց անցկացնեն: «Ինչ
ևս ուզում տեսնուիցը» աշուղ Յարդին
օղլուն ուղղւած յանդիմանութիւն է «Դուք
չաւ ինչի ձուռնեցէր»-ը հայ գեղջուկ կնոջ
զանգաւոր մասին հիւսւած բռնագործի մի
երգ է: «Այդոյ մէջ» առակած խրատ-
ներ են, իսկ «Վարժապետը» և «Ալափե-
տը» մանկավարժական խնդիրներու շուրջ
շօշափւած ոտանաւորներ են:

Սրանք են ահա Տէր-Կարապետի եր-
գերի նիւթերը, որոնք իրենց բովանդա-
կութեամբ յիշեցնում են մեզ Յարթին
օղլուն և Ամիր օղլուն. դրանից երևում
է, որ Տէր-Կարապետը ծանօթ է եղել
յիշեալ երգիչներին (այդ ցոյց է տալիս
իր «դավարում» գրած յիշատակագիրը.
1840 թիւն Յարթուն օղլի Յովհաննէսն
զօրացաւ, որ էր յոյժ ընտիր բանաստեղծ
աշուղ, կամ՝ 1826 փրկչի թւին աշուղ Ամիր
օղլին մահացաւ, որ էր բուն բանաստեղծ
աշուղ. և մեծապէս ազդեւ է: Բայց չնա-
յած դրան՝ նա իր ցերթւածներում գրել
է իր ինքնուրոյն դրոշմը:

Այսօր այդ երգերից շատերն անգիր
շրջում են գիւղացիների բերնում և երգ-
ւում փէրիս, Չահարմանալ, Բուրաբը,
Գեամարա, Գեափլա և այլն գաւառներում:

ԲՈՒՐԵՂ

20 Հոկտեմբեր 1921

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

ՈՒՂԵԼԻ

Թ. Խ.—Ստացանք Պ. Կրեմանէ հետեւեալ ծանօթու-
թիւնը. «ԲԱԶՄԱՎԷՊի Ն. Բ.ում լոյս տեսած յօդածիս
ծանօթութեան մէջ սխալմամբ գրել եմ. «Իսկ Ղուչ Յով-
հաննէսի մասին մի յօդած ուղարկել ենք Փարիզում լոյս
տեսնող «Օշակուն» ամսագրին: Խնդրում եմ Ն. Բ. ի
մէջ ուղղեցէ՛ք այսպէս. Վիեննայում լոյս տեսնող «Ա-
րեգ» ամսագրին»:

Հ.Ռ.ՈՍՍԿԱՆ

Ա Բ Բ Ա Յ Ա Ր Ա Ն

(Շար. տես Բազ. 1922 էջ 41)



Ժ.Բ. Ժողովատեղի (Salle Capitulaire)

Վանատան մէջ որոշուած էր ընդարձակ
սրահ մ'ալ, ուր միանձունք կը ժողովէին
ունկնդրելու և զօրծաղրելու մեծաւորաց
հրահանգներն և հրամանները և կը կո-
չուէր ժողովատեղի: Էջս—լա—Շափէլ ժո-
ղովին մէջ (817) ասոր յիշատակութիւնը
կայ:

Ժ.Գ. Փակարան կամ Արգելարան (Cloître)

Այն յարկածածուկ նորաշաւիղը կամ
գաւթիթը, որ եկեղեցին և վանքին միւս
շէնքերն իւրաւու հետ հաղորդակցութեան
կը դնէր՝ կ'ըսուի փակարան, որ և հռով-
մէական պալատաց atrium—ը կը յիշե-
ցնէ: Ներքին գաւթին մէջ կը գտնուէր ջրը-
հորը կամ աղբիւրը: Նորաշաւիղներում մէջ
կ'անցնէին միանձունք ընթերցելու և ու-
սանելու համար՝ բացի եկեղեցական պաշ-
տամուն, ճաշի և աշխատութեան ժամերէն:
Շարաթ օրեր հին ատեն աշխատաւորը
հոս կը լուանային միանձանց ոտքերը:
Ձմեռուան ցրտութեան պատճառաւ հարկ
տեսներն է ինչ ինչ տեղեր ասոր մերձ
վառարանով սննեակ մ'ալ յարդարել, որ
կը կոչուէր տաքտուն (chauffoir), ինչ
որ մինչև ցայսօր շատ վանքերու մէջ դեռ
ևս կայ:

Ժ.Դ. Նորընծայարան (Maison des novices)

Միաբանութեան մը մաս կազմելու փա-
փազող անձինք՝ մասնաւոր շէնքի մը մէջ
կ'ամփոփուէին առաջնորդի մը վարչու-
թեան ներքև և կը կոչուէին նորընծայա-
րան: Բնակարանն բոլորովին բաժնուած է

մենաստանէն, կամ աւելի առանձին թե մը կը կազմէր անջատ հասարակութիւնէն: Նորընծայը միայն հասարակաց աղօթքին ներկայ կ'ըլլային և միւս ժամերը կը պարպէին իրենց սահմանեալ յարկին մէջ ուսման, աշխատութեան, հոգևոր կենաց և աղօթից: Տարի մը կը տեւէր այս իրենց ընկերացքը: Ունէին մասնաւոր ճաշարան, խոհանոց, ննջարան, հանգստեան վայր, աշխատանոց և զբօսատեղի:

ԺԵ. Հիւանդանոց (Maison des infirmes)

Ս. Բենեդիկտոս և Ս. Օգոստինոս մասնաւոր կերպով կը պատուիրեն հիւանդ միանձնեւոր խնամելու համար: Ասոր համար վանքերու մէջ առանձին յարկ մ'ալ սահմանուած է, ուր կան խոհանոց, ճաշարան, դեղարան, բաղանիք և պարտէզ: Գրեթէ ամէն վանքերու մէջ հին բարեպաշտական սովորութիւն էր ննջեցեալ միանձին մարմինը լուանալ անուշահոտ ջրով՝ մասնաւոր յատուկ տեղով մը մէջ:

ԺԶ. Գերեզմանատուն (Cimetière)

Նուիրական վայր մ'էր ամէն մենաստանի իր մերձն ունենալ երկնատնէ միանձանց նշխարներուն հանգստարանը ուր մերթ ընդ մերթ անոնք կը յաճախէին խօսակից ըլլալու իրենց անդիական հղբարց հետ և խորհելու անոնց քաղցր յիշատակները: Կը պնէին անոնց ննջարանը անուշահոտ երփներանգ ծաղիկներով, և մշտադաւար սաղարթներ անոնց անմահութեանն նշանակ էին: Արքայք և իշխանք՝ նախանձաւորք այս երկնասարաս փառաց փափագեցան հանգչիլ այդ հանգըստարաններուն մէջ, և ասոր համար վանքերն օժտեցին առանձնաշնորհումներով: Դեռ ևս կան արեւմուտքի և արեւելքի մէջ ասոնց գեղեցկադիր հսկայ մահարձաններն իրենց արձանագրութիւններով: Եղան մեր Բագրատունի և Ռուբինեան հարստութեանց իշխանք ևս նմանողք, ինչպէս ի Հաղբատ և ի Դրազարկ և

այլուր, անմահ յիշատակ իրենց քրիստոսասէր կենաց:

ԺԶ. Մառան եւ Աշխատանոց (Cellier et Atelier)

Ամբողջ հասարակութիւն մը պահպանելու համար անհրաժեշտ էր, որ իրենց պարէնը շտեմարանէին կանխաւ տեղւոյ մը մէջ. ասոր համար ունէին մառան՝ ուր արկղերու և դարաններու մէջ կը գտնուէին խնամքով, Բաց աստի ունէին ամբարանոցներ, ուր կը ժողովէին ալիւր և ցորենահատիկներ և այլն: Ամէն վանք ընդհանրապէս իր շուրջը ունէր դաշտեր, զորս կը մշակէին միաբանք իրենց օրուան ոգեպահիկն հայթհայթելու համար: Կը զբաղէին ոմանք մասնաւոր աշխատանոցի մէջ հիւանդութեամբ. ատաղձագործութեամբ և այլ արհեստներով: Ունէին ջաղացք, որոց անիւները կը դառնային ջրոյ հոսանքներով և կամ այլ արուեստական գիւտաւոր ոյժերով: Հացեփեացք և խոհարարն իրենցմէ էր: Երբ Միաբանական կենանք ժամանակի հոլովելով ամէն ուսմանց և գիտութեանց մէջ զարգացաւ, մենաստաններ ստուգիւ դարձան ամենայն գիտութեանց աղբիւր, գեղեցիկ արուեստներն ալ այնչափ բարգաւաճեցին, որով վանքերը դարձան թանգարաններ գեղեցիկ նկարներու, արձաններու և ճարտարապետական ձեւերու: Այսպէս վանականք եղան հաստատուի, որ աստուածաշարժութիւնն և գիտութիւն ի միասին աւանդեցին ամէն դարու. Փաղղիոյ, Անգղիոյ, Գերմանիոյ իտալիոյ մէջ հրաշակերտ մենաստաններ մի մի ապացոյցներ են ասոր: Կը բաւէ առ այս ակնարկ մը տալ նոյն իսկ վեցերորդ դարու մէջ ծաղկած Թեոքիստայի վանքի աւերակներու յատակագծին և աւերակաց բեկորներուն, Ս. Խիբէի արքայարանին ստուերագծին, և այլն:

Այսչափ ընդհանուր կերպով արքայաւորանաց և վանատանց նկարագիր ընելնէս վերջը, արդեօք որչափ քաղցր պիտի գար ձայն մ'ալ, եթէ կարելի ըլլար մեր բնաշ-

խարհին մէջ ցանուած վանքերն հնչեցնել, իրենց վաղեմի անթարշամ փառքերով, և նոր կեանք տար այս աւերակոյտ բեկոր-ներուն, որ աննախընթաց բարբարոսութեամբ մոլեգին կատաղութիւն մը թուրանական ազգին՝ մեր պաշտելի և խնկարոյր սրբավայրերը ամայացուց: Առջնիս ու-նինք Հ. Ալիշանի Սիտաւանը, նա հոն կը շեշտէ, թէ ո՛րչափ թշնամւոյն սուրն և հոգին ուզէ մաշել և անհետ ընել, բայց Ահեղին ձեռքը զիտէ զայն սանձակոծել և մարտիրոսաց արիւնը պիտի ընէ սերմն մեծ ազգի մը: Վայրկեան մը կարդանք այս տողերը. (Սիտ. էջ 405) « Զգրիպեալն « ի խակամիտ թագաւորէն՝ կատարեաց « խակազոյն ամիրայ ռմն Պարսիկ՝ Աւշին « անուն, զկնի իբր քառասուն ամաց « (1066), զի յետ ասպատակելոյ յայլ « կողմանս գայր խաղալը բազմութեամբ « զօրօք, և արար ձմերոց ի Սեաւ լեառն, « և անագին արեան հեղութիւն և կոտու « բաժ լինէր յամենայն զաւառն, և բա- « զում անձինք ի սրբոց կրօնաւորացն՝ « մատնեցան ի բերան սրոյ և յայլումն « հրոյ, և եղին կերակուր զազանաց և « թռչնոց, և ոչ ժամանեցին ծածկել հո- « ղով, վասն զի միացին անթաղք մինչև « յախտանս, և անբիս վանորայք և գեղք « այրեցան հրով, որք երկին մինչև ցայ- « սօք. և Սեաւ լեառն և ամենայն զաւառն « ի ծայրէ ի ծայր՝ լցաւ արեամբ կրօնա- «ւորացն և քահանայից և արանց և կա- « նանց և ծերոց և տղայոց (Մատթ, Ուռհ. « ԶԳ.): Փոխեցին կենդանիք զմեռեալս. « զարձեալ բազմացան կրօնաւորքն և շի- « նեցան անապատք, այնքան՝ մինչև յետ « երեսուն ամաց ի դիմել յայսկոյս բա- « նակի Ս. Խաչակրաց, ընդ Ռուբինեան « և Հեթման պայազատաց՝ նոյնպէս և « վանորայքն Սեաւ լեռին՝ կերակրօք « օգնէին նոցա, Յիշեն և պատմիչք նոցին « արեւմտեայք՝ զբազմութիւն վանորէից « Սեաւ լեռին, և ասէն ընակեալ և ի « լատինաց ևս և յամենայն ազգաց»: Ծարտարագունից թողլով ընդարձակօրէն խօսելու և կամ պրպտելու մեզմէ նախ-

ընթացից գրեբեր՝ զոհանանք քանի մը տողերով ըսել, թէ երբ սկսան մեր վա-նորայք և ընդհանուր ինչ աստիճաններ ունէին:

Առաքելական դարէն կը սկսի վանա-կանութիւնը մեր ազգին մէջ, Հայասա-տունը կ'ըսեն որ Ս. Բարթողիմէոս Երկ-նից հզօր Տիրահալոյն դաստառակն առած Հայաստան իջաւ քարզելու ճշմարիտ հա-ւատքը: Բզնունեաց ծովուն հարաւակող-մը Անձեացեաց աշխարհին մէջ Դարբնեաց քարին մերձ կանգնեց վանք մը եկեղե-ցեակով, և հոն հանգչեցուց Տիրամօր պատ-կերը, և անոր պահապան կանգնեց սուրբ կինեռու ուխտ մը և տեղը կոչուեցաւ Հո-գեաց վանք: Ահա հոս է որ գրեթէ երեք դար վերջը Արևմտեան կուսանք՝ Արշա-լոյսք Հայաստան աշխարհին՝ Սուրբ Հորի-սիմեանք՝ կ'իջևանեն ժամանակ մը, բայց յետոյ բռնադատուած՝ դէպի հիւսիս Այրա-րատեան աշխարհ կը դիմեն, վաղարշա-պատու մերձ հնձանաց մէջ ժամանակ մը կը ճգնին՝ մինչև իրենց մարտիրոսութիւնը: Եւ ահա կը ծագէ Պարթևագն Գրիգոր՝ ազգիս լոյս լուսատուն, որ զիրենք փա-ռաւորապէս պատուելէն վերջը, իրենց նահատակութեան տեղոյն վերայ ալ եկե-ղեցի և վանք կը յօրինէ, ցուցնելու հա-մար մեր կրօնաւորութեան սկզբնաւորու-թիւնը: Վանքեր՝ երբ նշանաւոր կամ ար-քայական և կամ եպիսկոպոսական պա-տիւով և պաշտպանութեամբ օժտուած ըլլային՝ կը կոչուէին Մայրաքաղաք, Մայր Մենատուն, Մայրավանք. զոր օրինակ՝ « շինեաց զհռչակաւոր Մայրաքաղաք մե-նաստանացն զվարազ » (Արծր.), « կար-գաղութիւն Մայրաքաղաքիդ » (Ուխտիդ Սանահնի). « Ուխտիդ սուրբ և Մայրա-քաղաքիդ Մարմաշինոց » (Գրիգ. Մագիս-տրոս), « ըստ Նմանութեան Մայրաքաղա-քացն սպուդէից » (Խորենացի): Մոյն իմաստով գործածուած է նաև Միավանք, այսինքն առաջին և երկելի վանք միա-բանակեցաց:

Հետեալ բառերն ալ կիրարկուած են ընդհանուր ամէն մենաստանաց համար,

Միայնաստան, Միայնակեցանոց, Միայնա-
նոց, Մենաստան, Վաներ, Վանեար, Վա-
ներայք, Վանկունք, Վանկոռայ, Վանք,
Միանձնանոց: Իսկ անապատ բառը գործա-
ծուած է այն վանքերուն համար, որ
քաղաքէն սակաւ հեռի շինուած են: «Պարն
զսուրբն Ընդատակէս բնակեալ յանապատի
յիւրոս միայնաստանս»: Մեր Նախնի
հայրապետներէն պատմութեան մէջ նշա-
նակուած և հռչակուած են վանաշինու-
թեամբ՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ՝ հայրն
հայրենեաց, Մեծն Ներսէս Պարթև, Ս.
Սահակ, Ս. Մեսրոպ և այլք:

Ո. Կ.



ԼԵԶՈՒՄԳԻՏԱԿԱՆ

ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ս. ԿԵՒՐԼԻ ԵՐՈՒՍԱՂԵՄԱՑԻՈՑ

ԿՈՉՈՒՄՆ ԸՆԶԱՅՈՒԹԵԱՆ

(Շար. տես Բզմ. 1922 էջ 45)

ԼԴ.

Էջ 375. տող 8. «Չոր օրինակ որ
մկրտին, ի ներքս ի ջուրս մկրտին, և
շուրջ զիւրեամբք ջուրքն պատեալ լինին.
այնպէս որ ի Հոգւոյն սրբոյ մկրտեցան,
կատարեալ մկրտեցան: Արդ այն որ ի
ջուրս անդր իջանեն, շուրջ զիւրեամբք
արտաքոյ ջուրքն խողխոջանեն. իսկ Հոգին
սուրբ և զնեքքին ոգիսն մկրտէ առանց
լեկելոյ»:

Ուղղ. առանց խողխոջելոյ: Մինչ նիւ-
թական ջուրն զգարմնոյ աղան սրբէ,
խողխոջելով մարմնոյ շուրջը, Հոգին սուրբ
աներեկոյթ և անձայն-առանց խողխոջելու,
կը հեղու հոգւոյն շուրջը, կ'ընդմտանէ
աստուածային զօրութեամբ մարդու բնու-
թեան մէջ և կը սրբէ կատարեալ մկրտե-
րեամբ. այնպէս ինչպէս օրինակ կու տայ
սուրբ Հայրն, սև ժանգոտ երկաթը, կրակի

մէջ հրոյ բնութիւն կ'առնու. նիւթականը
ժամանակաւոր, իսկ աննիւթն հոգեկանը՝
մշտնջենաւոր, յաւիտենական:

ԼԵ.

Էջ 378. տող 20. «Սոյնպէս նոյն
հոգին սուրբ թէպէտ և կայ միայն և միայ,
որպէս և ինքն. և բազում անգամ ի
մարգարէս զօրացաւ, և նոր իմն և զքան-
չելի հանդէս երևեցոյց: Հասեալ եհաս
շնորհս և ի հարան առաջինս, բայց կա-
տարեալպէս ի նոսա. զի անդ լի եղեն
Հոգւով սրբով, այլ աստ կատարեալպէս
մկրտեցան»:

Ուղղ. կայ և միայ, որպէս և ինքն...
բայց այժմ կատարեալպէս ի նոսա... Հին
Ուխտի սուրբերն թէպէտ լի եղան Հոգւով
սրբով, բայց ոչ կատարեալպէս բոտ քրիս-
տոնէից՝ որք յանուն Յիսուսի Գրիստոսի
ջրով մկրտուեցան. կամ թէ Յովհաննէս
մկրտեց ջրով. այլ Առաքեալք և բոտ
նոցուն քրիստոնեայք մկրտեն ի Հոգի և
ի հուր:

ԼԶ.

Էջ 400. տող 8. «Իսկ արեգական այս
փոքր ինչ արարած է Աստուծոյ, և ի
միում ծագել իւրում զամենայն տիեզերս
ջնուցանէ առ հասարակ. օդք՝ զոր Աս-
տուած արար, զամենայն արարածքս միան-
գամայն պաշտեն. իսկ Աստուած որ արե-
գական և օդոց արարիչ է, հեռի՝ ինչ
յաշխարհէ է»:

Ուղղ. «Զամենայն արարածքս միան-
գամայն պատէ»: Կամի Ս. Հայրս ասել թէ
բոլոր տիեզերք Աստուծոյ ձեռքին մէջն
է. եթէ արեւը զտիեզերք կը լուսաւորէ,
օդքս բոլոր երկիրս կը պատէ, Աստուծոյ
ստեղծածն է, օրչափ ևս առաւել ստեղ-
ծողի զօրութիւնը կը պարփակէ զհամագոյս:

ԼԵ.

Էջ 407. տող 28. «Եւ գաւազան Ա-

8